ջանօք չարչարեսցես եւ զինքեան խսկ զմարմնոյ զմիսն կտրեալ ինքեան ուտեցուսցես· եւ ապա զՄելքիսէթն... առ իս առաքեսցես ասա»: Հրամանը ճշդութեամբ կը կատարուի[12]: Ի Գորի ի մէջ այլոց կ'ուղղէ Շահը Մելքիսեդեկին խօսքերս· «Դատաստան քո ասա ոչ լինի առնել, զի Ալասն քո մեծ է· այժմ պարտ է քեզ գնալ յԱսպահան եւ անդ կալ մինչեւ ես եկեալ անդ՝ արարիցս զդատաստան քո» (Դաւր· 209): Մելքիսեդեկ կը զերծանի սակայն Շահին խիստ դատաստանէն, միջնորդութեամբ Մելիք Հայկազն իշխանի· Մովսէս վարդապետ 1615ին իւր առ Գրիգոր Կեսարացի թղթին մէջ (տե՛ս վերը, էջ 32) հետեւեալը կը գրէ նոյն իշխանի բերանէն· «Աստ Նազարն տուաւ ունել զՄելքիսէթն ի Շահոյն, զոր սպանանել տայր· ես աղաչեցի Աստ Նազարն, որ եթող· զձեր խրատն չէի լսել[13]»: Երեք հարիւր թուական տուղանք տա-

---

[12] Ամիրասէ Երզնկացի կը գրէ 1655ին· «Վաղարշապատու կաթուղիկոսքն ես Եղնկացի Ամիրասրս որ ականայտես եղէ՝ նախ Դաւիթ կաթողիկոս եւ ապայ տէր Մելքիսէթն, որ Շահ Ապասն չարչարանք արաւ· մէկն այս է՝ ուրարով գերկու բէնն տաշեց որպէս գփայտ· յետոյ յաջորդեց տէր Մովսէս, տէր Փիլիպոսն եւ տէր Յակոբն· ՌՃԴ թիւն էր»· Թ· 88 Վենետիկի Մխիթ· Մատ·, թղ· 249բ (Տաշեան՝ Ցուց· 355): Այս տանջանքներն անշուշտ նկատի ունէր Յովհաննէս Քարամատենց, երբ կը գրէր 1618ին իւր նորատիպ Սաղմոսարանի Յիշատակարանին մէջ· «Արդ եղեւ զրաւ սորին... ի հայրապետութեանն Էջմիածնայ սուրբ յաթոռոյն կենդանի նահատակին տեառն տէր Մելքիսեդեկ կաթողիկոսին» (Պատմութիւն հայկական տպագրութեան· Վենետիկ 1895, էջ 66):

[13] Առաքել Դաւրիժեցւոյ քով ժամանակագրութիւնը, նաեւ դէպքերը, չփոթ կ'երեւան· անոր խօսքե-